ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 32

16.10.2020թ. կնքված N ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-20/3Հ գնման պայմանագրի

ք. Երևան «27» 08 2026թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Վ. Հարությունյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հայնախագիծ» ԲԲԸ-ն (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Գ. Ազիզյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ կառավարության 20.08.2026թ. N 1260-Ա որոշումը և **Փոքրաքանակ երեխաներով համալրված հանրակրթական դպրոցների տիպային (մոդուլային) շենքերի կառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայության** մատուցման համար Կողմերի միջև 16.10.2020թ. կնքված ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-20/3Հ գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝

1.1.1 Պայմանագրի 4.1 կետում «93 471 618 (իննսուներեք միլիոն չորս հարյուր յոթանասունմեկ հազար վեց հարյուր տասնութ)» թիվը և բառերը փոխարինել «94 701 079 (իննսունչորս միլիոն յոթ հարյուր մեկ հազար յոթանասունինը)» թվով և բառերով, իսկ «ՀՀ Արագածոտնի մարզի Գառնահովիտ համայնքի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություն – 4 080 366 (չորս միլիոն ութսուն հազար երեք հարյուր վաթսունվեց) ՀՀ դրամ» պարբերությունը փոխարինել «ՀՀ Արագածոտնի մարզի Գառնահովիտ համայնքի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություն – 5 309 827 (հինգ միլիոն երեք հարյուր ինը հազար ութ հարյուր քսանյոթ) ՀՀ դրամ» պարբերությամբ:

1.1.2 Պայմանագրի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում «93 471 618» թիվը փոխարինել «94 701 079» թվով:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է մեկ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՏԱՐՈՂ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե	«Հայնախագիծ» ԲԲԸ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,	ք. Երևան, Չարենցի 1
կառավարական տուն 3	«Արդշինբանկ» ՓԲԸ
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի	Հ/Հ 2470100038500000
գործառնական վարչություն	ՀՎՀՀ 01503291
Հ/Հ 900011047678, 900011047686, 900011047892,	Տնօրեն՝
900011047900, 900011048494, 900011048510,	
900011048361, 900011047918, 900011048635,	
900011048379, 900011048528	
ՀՎՀՀ 02565827	
Գլխավոր քարտուղար՝	
_____ Վ. Հարությունյան	_____ Գ. Ազիզյան
(ստորագրություն) Կ.Տ.	(ստորագրություն) Կ.Տ.